



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՐԱԿԵՆՏՐ



**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.  
21-րդ դարի մարտահրավերներ  
և հնարավորություններ**

**DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:  
Challenges and Opportunities of 21st Century**

**РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:  
ВЫЗОВЫ И ВОЗМОЖНОСТИ 21-ого века**

**ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ**

2017 թ., նոյեմբերի 22-24

**Երևան 2018**

ՀՏԴ 330:06  
ԳՄԴ 65  
Տ 778

Հրատարակվում է  
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

**Խմբագրական խորհրդի նախագահ՝**

**ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ**

ՀՊՏՀ ռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

**Խմբագրական խորհուրդ՝**

- ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ** - ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., դոցենտ  
**ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ** - ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր  
**ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ** - ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, Կ.գ.դ., պրոֆեսոր  
**ԽՈՐԵՆ ՄԻՒԹԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, Կ.գ.թ., դոցենտ  
**ԱՇՈՏ ՍԱԼԵԱԶԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր  
**ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ** - ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր  
**ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., Կ.գ.դ., պրոֆեսոր  
**ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ** - ՀՊՏՀ պրոռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և  
Տ 778 հնարավորություններ: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ,  
2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06  
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

## ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հեղափոխություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրապարակապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հեղափոխական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այսօրեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հեղափոխություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահեղափոխական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հեղափոխ գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մտադրում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՅԱՆ  
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

quality, quantity, assortment, mode, the manifestation of philosophical laws in commodity science .

*The rising role and necessity of application of philosophical knowledges in modern merchandising /science in good/ are substantiated. It also provides examples of the philosophical laws in the basic categories and concepts of merchandising.*

## ՉՈՅԱ ԱՏԵՓԱՆՅԱՆ

Դասախոս, ՀՊՏՀ

### ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ ՈՐՊԵՍ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵՁՎԻ ՀԱՅՐԵՆԻՔ

«Հայ ազգն իսկապես յուրահատուկ է: Հայերն ունեն իրենց սեփական լեզուն, որը բոլորովին փարբեր է հնդեվրոպական խմբի բոլոր մյուս լեզուներից, որը որևէ այլ լեզվի ճյուղ չէ»:

**ԱՆՏՈՒԱՆ ՄԵՅԵ**

**Հիմնաբառեր.** լեզու, հայրենիք, լեզվաբաններ, լեզվաբանություն, լազվաբանությանիք, փիլիսոփայություն

Չնայած հնդեվրոպացիների նախահայրենիքի՝ Եվրոպայում գտնվելու տեսակետի բացարձակ գերիշխանությանը, զգալի թվով գիտնականներ ժամանակ առ ժամանակ վերադարձել են հնդեվրոպացիների նախահայրենիքի՝ Առաջավոր Ասիայում գտնվելու տեսակետին:

Եվրոպան որպես հնդեվրոպական լեզվի հայրենիք վարկածի հիմքերը խարխվեցին հատկապես այն ժամանակ, երբ հետազոտությունները ցույց տվեցին, որ հնդեվրոպական լեզուն կրողների սկզբնական բնակավայրը՝ հայրենիքը, եղել է լեռնային երկիր՝ իր բոլոր հատկություններով, ինչը բնավ չի համապատասխանում եվրոպական այն տարածքին, որ փորձում էին ներկայացնել իբրև այդ լեզվի ծագման վայր:

Իրոք, հազարամյակների խորքն է գնում հնդեվրոպական մայր ժողովրդի ու լեզվի գոյության ժամանկաշրջանը: Իսկ ե՞րբ է սկսվել տրոհումը: Որոշ գիտնականների կարծիքով ամենավաղ տրոհումը պետք է սկսած լինի մ.թ.ա. VI-V հազարամյակներում, ոմանց կարծիքով՝ IV հազարամյակում: Ուրեմն՝ հայոց լեզվի և հայերի ծագումը պետք է վերաբերի մ.թ.ա. VI-IV հազարամյակներին, այսինքն՝ մեզանից 5-6 հազար տարի առաջ:

Հնդեվրոպական լեզվի հայրենիքի փնտրտուքների արդյունքում Արևմուտքի գիտնականներից ոմանք այն իբր գտան Բալթիկ և Սև ծովերի միջև ընկած տարածքներում:

Սա գիտական շրջանակներում սկզբնական շրջանում մեծ ընդունելության արժանացավ, և նույնիսկ հայ գիտնականներից ոմանք էլ հարեցին այդ տեսությանը:

«1862 թ. Ռ. Լաթամի կողմից առաջ է քաշվում այն կարծիքը, որ հնդեվրոպացիների նախահայրենիքը գտնվել է Եվրոպայում: Լաթամի կարծիքը երկար ժամանակ իշխում էր գիտության մեջ և այժմ էլ շատ կողմնակիցներ ունի: Այս դեպքում էլ տարակարծությունները պատվում են այն հարցի շուրջը, թե Եվրոպայի ո՞ր մասում պետք է այն փնտրել: Ամենից ավելի հավանական է համարվում, որ այն գտնվել է հարավարևելյան Եվրոպայում՝ Բալթիկ և Սև ծովերի միջև ընկած տարածքում»<sup>1</sup>:

Իրենց աշխատություններում այս տեսակետը պաշտպանել են Եվրոպական հայագետներից Հ. Հյուբշմանը, Ա. Մեյեն, հայ հայագետներից Հ. Աճառյանը, Ն. Ադոնցը, Հ. Մանանդյանը և շատ ուրիշներ:

Չնայած հնդեվրոպացիների նախահայրենիքի՝ Եվրոպայում գտնվելու տեսակետի բացարձակ գերիշխանությանը զգալի թվով գիտնականներ ժամանակ առ ժամանակ վերադարձել են հնդեվրոպացիների նախահայրենիքի՝ Առաջավոր Ասիայում գտնվելու տեսակետին:

19-րդ դարի 90-ական թվականներին գերմանացի գիտնական Ի. Շմիդտը վերադառնում է հնդեվրոպական նախահայրենիքի ասիական վարկածին:

XX դարում ասիական նախահայրենիքի գաղափարն աջակցություն է գտնում այնպիսի լեզվաբանների գործում, ինչպիսիք են Թ. Գամկրելիձեն Վրաստանից, Վ. Իվանովը Ռուսաստանից (1984 թ.), Ա. Դոլգոպոլսկին (1987 թ.) Իսրայելից և այլն:

1967 թ. լույս է տեսել Գ. Զահուկյանի «Հայոց լեզվի նախագրային շրջանի պատմության ակնարկներ» գիրքը: Նա նույնպես համամիտ է հնդեվրոպական նախահայրենիքի Առաջավոր Ասիայում գտնվելու կարծիքին: Սակայն վերը նշված գրքում նա առաջ է քաշել հնդեվրոպական նախահայրենիքի տեղադրության վերաբերյալ երեք հիմնական դրույթ.

1. Հնդեվրոպացիների զբաղեցրած տարածքը ժամանակի ընթացքում փոփոխվել է, և նրա սահմանները մ.թ.ա. 5-րդ հազարամյակում ուրիշ են եղել, քան 4-րդ հազարամյակում;
2. Հնդեվրոպացիների կյանքում մեծ դեր են խաղացել անասնապահությունը և որսորդությունը, հնդեվրոպացիները նոր են սկսել անցնել երկրագործության. Սա նշանակում է, որ ենդեվրոպան ցեղերը սկզբնապես շատ շարժուն են եղել, և նրանց նախահայրենիքի մասին խոսելիս պետք է որպես քիչ թե շատ կայուն տարածք նկատի առնել՝ տրոհման անմիջական նախօրյակին եղած վիճակը:
3. Թեև չի կարելի լիովին ապացուցված համարել հնդեվրոպացիների ցեղակցությունը սեմիտների, այլ կովկասյան, թուրքական և այլ ժողովուրդների հետ, բայց բառապաշարի ակնհայտ զուգահեռությունները խոսում են նրանց շփումների մասին:

Այսպիսով, կարելի է ենթադրել, որ հնդեվրոպացիները մի ժամանակ բնակվել են մի տարածքում, որ հարևան է եղել սեմիտների բնակության տարածքին: Հասկանալի է, որ այստեղ նկատի է առնվում Առաջավոր Ասիան:

<sup>1</sup> Գ. Բ. Զահուկյան, «Զրույցներ հայոց լեզվի մասին», 1992:

Եվրոպան որպես հնդեվրոպական լեզվի հայրենիք վարկածի հիմքերը խարխուլվեցին հատկապես այն ժամանակ, երբ հետազոտությունները ցույց տվեցին, որ հնդեվրոպական լեզուն կրողների սկզբնական բնակավայրը, հայրենիքը եղել է լեռնային երկիր՝ իր բոլոր յուրահատկություններով, ինչը բնավ չի համապատասխանում եվրոպական այն տարածքին, որ փորձում էին ներկայացնել իբրև այդ լեզվաընտանիքի ծագման վայր:

«... Ամենից առաջ մենք եկանք այն եզրահանգման, որ հնդեվրոպական նախահայրենիքը եղել է լեռնային բնապատկերով տարածք: Այդ մասին են խոսում բազմաթիվ բարձր լեռների, ժայռերի ու բարձունքների նշանները, լեռնային կաղնու, ինչպես նաև լեռներում աճող այլ ծառերի և թփերի անունները: Առասպելաբանական տեքստերում պատմվում են լեռնային լճերի և արագասլաց գետերի մասին, որ սկիզբ են առնում լեռներից: Այդպիսի բնապատկերը հատուկ չէ Եվրոպայի հարթավայրային շրջաններին՝ հատկապես Արևելյան Եվրոպայի՝ Հյուսիսային Մերձսևծովյան շրջաններին»:

*(Վ. Իվանով, Թ. Գամկրելիձե)*

Հետևապես, Թ. Գամկրելիձեն և Վ. Իվանովը հնդեվրոպական նախահայրենիքը տեղադրում են Հյուսիսային Իրանում և Հայկական բարձրավանդակում:

Այնուամենայնիվ, նրանք, ովքեր մերժում են եվրոպական տարբերակը և ընդունում ասիականը, ի տարբերություն եվրոպական հայրենիքի կողմնակիցների, ավելի ուշ շրջանի մասնագետներ են և, արդեն ուսումնասիրելով վաղ շրջանի եվրոպամետ գիտնականների աշխատությունները, կարողացել են հերքել և ավելի հիմնավոր տարբերակ առաջարկել, որն ասիականն է:

Ասիական տարբերակի կողմնակիցների մոտ էլ ամեն բան հարթ չէր, քանզի նրանք, միակարծիք լինելով ասիական տարբերակին, միակարծիք չէին, թե այն հատկապես Ասիայի որ՝ մասում պետք է փնտրել: Ոմանք կարծիք են հայտնել, թե այն գտնվել է Հիմալայներից մինչև Կասպից ծով ընկած տարածքներում, ոմանք այն տեղադրել են Փոքր Ասիայից մինչև Միջին Ասիա եղած տարածքներում, իսկ ոմանք էլ այնտեղ, ուր ցույց է տալիս Սուրբ Գիրքը՝ Հայկական լեռնաշխարհում:

Իրոք, հազարամյակների խորքն է գնում հնդեվրոպական մայր ժողովրդի ու լեզվի գոյության ժամանակաշրջանը: Իսկ ե՞րբ է սկսվել տրոհումը: Հայոց լեզուն ամբողջությամբ բառապաշարային և քերականական այնպիսի տարբերություններ ունի հնդեվրոպական հարևան և ոչ հարևան լեզուների համեմատ, որ նրա անջատումը մայր հնդեվրոպականից պետք է կատարված լինի ամենավաղ ժամանակներում:

Որոշ հնդեվրոպաբանների կարծիքով ամենավաղ տրոհումը պետք է սկսած լինի մ.թ.ա. VI-V հազարամյակներում, ոմանց կարծիքով՝ IV հազարամյակում:

Ուրեմն հայոց լեզվի և հայերի ծագումը պետք է վերաբերի մ.թ.ա. շուրջ V-IV հազարամյակներին, այսինքն՝ մեզանից 5-6 հազար տարի առաջ:

Շրջադարձային եղավ 1964 թ. կատարված մի հայտնագործություն, որ ուղղակի ապացուցեց հնդեվրոպական և սեմական մայր ժողովուրդների երկարամյա հարևանությունն ու շփումը վաղընջական ժամանակներում, և որը հիմք դարձավ հնդեվրոպացիների հին հայրենիքը Փոքր Ասիան համարելու համար:

Փաստորեն սեմական և հնդեվրոպական լեզուների հայրենիքն ի սկզբանե, մինչև այդ լեզուների՝ աշխարհով մեկ սփռվելը, գտնվել է միևնույն վայրում, ինչը լիովին համահունչ է Սուրբ Գրքին:

«Խոսքն, իհարկե հայկական լեռնաշխարհի ամենաանգին հնագիտական նյութի՝ հայոց լեզվի մասին է, որը չնայած հազարամյակների հնամենության՝ արիական արմատական համակարգով ամուր պահպանված է:

Աշխարհի ուրիշ ոչ մի հնդեվրոպական լեզու չի բերել արիական ցեղի այդքան ֆունդամենտալ, նախակուտակումից: Ինչե՛ր արժե միայն «արիացեք» բառը: Միայն այն, որ սա պահպանվել է հայոց լեզվում և առհավետ մնացել է նրանում, շատ բաների մասին է ասում: Առաջին հերթին՝ ազգի խիզախության մասին: Եթե սրան ավելացնենք նաև «Արարիչ» բառը, ապա պարզ կդառնա, որ պեղումները պետք է կատարել ոչ թե հողում, այլ հայկական հոգում...

Արարիչ, արիացեք, արարել՝ այս շարքը հայոց լեզվում անվերջանալի է, ահա դրանք՝ մինչհնդեվրոպական մարդկության առաջին բառերը, ինչն ավելորդ անգամ խոսում է այն մասին, որ հնդեվրոպացիների նախահայրենիքը պետք է փնտրել Հայկական լեռնաշխարհում»<sup>1</sup>:

Աշխարհի գիտնականներին մի քանի դար էր հարկավոր, որպեսզի իրենց աշխատանքներով անտեսեին Սուրբգրային տեղեկությունները և փոքր Ասիայի տարածքից հնդեվրոպական լեզվի հայրենիքը հեռացնեին՝ հասցնելով մինչև Եվրոպա:

Ապա դեգերումներից հետո Եվրոպայից վերադառնալիս այն նույն վայրը, որտեղ եղել է առաջին մայր լեզուն՝ Հայկական լեռնաշխարհը և նրա շրջակա տարածքները, որտեղից ադամական լեզուն՝ տրոհվելով տարբեր լեզվախմբերի, տարածվել է աշխարհով մեկ:

Այսպիսով շատերը Հայաստանի տարածքն սկսեցին համարել հնդեվրոպական լեզուների հայրենիք:

Հայոց լեզուն լեզվաբանների համար այնքան գաղտնախորհուրդ է, որ տարիներ շարունակ ուսումնասիրելով՝ նրանք չէին կարողանում նույնիսկ հասկանալ, թե ո՞ր լեզվախմբին է այն պատկանում:

Հարցն այն է, որ հայոց լեզուն, ունենալով բազմաթիվ ընդհանրություններ հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող լեզուների հետ, միևնույն ժամանակ պարունակում է բազմաթիվ տարրեր նաև մյուս լեզվախմբերից: Կրելով իր մեջ բոլորինը՝ միևնույն ժամանակ այն հստակորեն տարբերվում, առանձնանում է բոլորից:

Հայերենի՝ համընդհանուր լեզուների խառնարան հանդիսանալը հայտնի էր շատ վաղուց:

Եղիշեն դեռևս 5-րդ դարում ներկայացնելով տարբեր լեզուների հատկությունները՝ ասում է այս մասին՝ շեշտը դնելով հայոց լեզվի այդ առանձնահատկության վրա:

«Հունարենը մեղմ է, հռոմեական լեզուն՝ հզոր, հոներենը՝ ահաբեկող, ասորերենը՝ աղերսական, պարսկերենը՝ պերճ, ալաներենը՝ գեղեցկազարդ, գոթերենը՝ հեզնական,

<sup>1</sup> Ն. Սահակյան, Հայերը, Եր., 1977:

եգիպտերենը՝ տափակախոս ու խավարածայն, հնդկերենը՝ ճովողական, հայերենը՝ քաղ-  
ցր, որ միաժամանակ կարող է մյուս բոլոր լեզուների հատկություններն ամփոփել իր մեջ»:  
*(Եղիշե «Մեկնություն Արարծոց, Մափենագիրք Հայոց»)*

Հայերենի՝ բոլոր լեզուների հատկություններն իր մեջ ամփոփելը՝ լեզուն տիրապե-  
տողին թույլ է տալիս առանց մեծ դժվարության սովորել ցանկացած լեզու: Իսկ այլալեզու  
անձանց համար հայերենին կատարելապես տիրապետելը չափազանց դժվար է, քանի  
որ, ըստ Գրիգոր Տաթևացու, մասնավոր է նրանց լեզուն:

Մխիթարյան հայրերից շատերն էլ այն համոզման են, որ այլալեզու մարդկանց հա-  
մար ոչ միայն հայոց, այլև աշխարհի տարբեր լեզուները սովորելը դժվար է՝ ի տարբերու-  
թյուն հայալեզու մարդկանց: Դրա պատճառը համարում են հայոց լեզվի՝ մայր լեզու լինե-  
լը: «Մեր լեզվի ընդհանուր կազմության մեջ պերճությունը գտնում ենք ոչ թե արվեստի  
միջոցով, այլ՝ բնական. Դա նախ հնչյունների հարստությունն է, որը վայել է առաջին լեզ-  
վին, որ սփռվեց աշխարհի բոլոր կողմերում, քանզի ունենալով 36 տառ (36 հնչյուն). մեր  
հայերը այժմ աշխարհի որ ծայրում էլ գտնվեն, կարողանում են հեշտությամբ օտար լեզու-  
ներով խոսել՝ որքան հնարավոր է և հարմար Ադամի և Նոյի լեզվին»:

*(Ղուկաս Ինճիճյան «Հնախոսություն աշխարհագրական Հայաստանյազ աշխարհի»)*

«Քանի որ հայրենի տարբերությունը հնդեվրոպական մյուս լեզուներից մեծ է,  
հայտնվում է այն կարծիքը, թե հայերենի անջատումն ընդհանուր հնդեվրոպականից  
առաջնածին է»:  
*(Ըստ՝ Միցոս Ալեքսանդրոպոլոսի)*

Շատ հեղինակավոր գիտնականներ, ինչպես տեսանք, ապացուցել են, որ Հայաս-  
տանն է հնդեվրոպական լեզուների հայրենիքը, սակայն դա նույնպես մասամբ է ճշմա-  
րիտ, քանզի որտեղ եղել է ծառի բունը, այդ վայրը ոչ թե մեկ ճյուղի, այլ՝ ողջ ծառապսա-  
կի, բոլոր ճյուղերի հայրենիքն է: Այլ կերպ՝ հայկական լեռնաշխարհը ոչ միայն հնդեվրո-  
պականի, այլև բոլոր լեզուների նախահայրենիքն է, նաև համայն մարդկության հայրե-  
նիքը...

«Նախալեզվի հետնորդը դարձավ նախահայրենիքում մնացած ժողովրդի լեզուն՝  
հայերենը, որով պետք է որոնել աշխարհի լեզուների նախահիմքը և սաղմերը, որով և նա  
մայր /կամ՝ տատ/ է բոլոր լեզուների: Ուստի՝ ամփոփելով կարող ենք ասել, որ հայերենն  
ընդհանրական լեզվի սկզբունքային համակարգը պահպանած ժամանակակից լեզու է և  
կարող է ընդհանրական լեզվի ուսումնասիրության հիմնական առարկան լինել»:

*(Վարդան Ասատրյան)*

Հետաքրքիր է ևս մի փաստ, ինչն ակամայից խոսում է ի նպաստ հայոց լեզվի՝  
առաջին լեզու լինելու: Երբ 20-րդ դարի 60-ական թվականներին աշխատանքներ էին  
տարվում միջազգային լեզու ընտրելու կամ ստեղծելու ուղղությամբ, Ֆրեդերիկ Ֆեյդին և  
մի խումբ այլ Արևմտյան հայագետներ առաջարկեցին՝ հայոց լեզուն դարձնել միջազ-  
գային լեզու: Սակայն գերտերություններն ընդդիմացան և ի վերջո որոշեցին արհեստա-  
կան լեզու ստեղծել՝ «էսպերանտո»:



«Մենք վստահ ենք, որ եթե կա բառերի ճշգրիտ իմաստը արտահայտող մի լեզու, ապա դա հայերենն է. առաջարկում ենք, որ նրան տրվի նախապատվություն էսպերանտոյի փոխարեն»:  
(Ֆրեդերիկ Ֆեյդի)

Իսկ եթե համաձայնության գային, և հայերենը դառնար միջազգային լեզու, մարդկությունը կրկին կսկսեր խոսել այն միակ լեզվով, որով խոսել էր մինչ բաբելոնյան խառնակումը:

Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվում պահպանվել է մի հետաքրքիր ձեռագիր նամակ, որ գրել է հնդկահայ՝ մադրասցի Շահամիր Շահամիրյանը՝ Մադրասում բնակվող անգլիացի բժիշկ Ջիմ Անդերսենին.

«Մխիթարություն ունեմ այժմ քեզ մի հողված ուղարկել Իսպանիայի աշխարհագրական պատմությունից վերցված, որը թարգմանել եմ անգլերեն, այն վերաբերում է հայոց լեզվին առ այն, որ դա հաստատ եղել է մեր նախահոր՝ Ադամի լեզուն: Այդ գրքի հեղինակը սրբակրոն Պետր Մուլիոն Մեքսիկացին է, գրքից հանած այդ հատվածը 1852 թ. տպագրեցի Մադրասում. «Հայն է Հայաստանի բնիկը, որտեղ Արարատ կոչված լեռան վրա իջավ Նոյյան տապանը, որտեղից էլ մարդիկ, և ընդհանրապես բոլոր ազգերը տարածվեցին աշխարհի չորս կողմերը, ինչը պետք է հոչակել և խոստովանել, քանիզի մենք որդի և սերունդ ենք այդպիսի երջանիկ ազգի, որի լեզուն ավելի մեծ և հարուստ է, քան աշխարհի մեջ բոլոր եղածները, ինչը ոչ ոք չի կարող հերքել, քանզի սա է առաջինը, որ եղել է երկրի վրա, որ գործածվում էր մեր նախահայր Ադամի կողմից: Քանզի ջրհեղեղից հետո ոչ ոք չմնաց բացի Նոյից և նրա ընտանիքից, նրանք էին, որ տապանի մեջ գործածում էին այդ լեզուն, որ նրանց հայրերը ուսուցանել էին իրենց: Եվ Աստծու հրամանով իջնելով Նախիջևան՝ նրանք խոսում էի այդ նույն բարբառով»<sup>1</sup>:

Տեսնում ենք, որ իսպանացի հոգևորականը վստահորեն համարում է, որ հայոց լեզուն եղել է ադամական լեզուն և կարծես հպարտանում է, որ իրենք սերում են հայ ազգից՝ հավանաբար նկատի ունենալով, որ իրենց նախահայրենիքն Արարատյան երկիրն է, որի բնիկները հայերն են, որ ի սկզբանե ապրել են այստեղ և մյուս ազգերի պես չեն հեռացել Հայկական լեռնաշխարհից: Այս հոգևորականի մոտեցումը տվյալ հարցին միանգամայն համահունչ է գիտական աշխարհի բազմաթիվ ներկայացուցիչների եզրահանգումներին:

«Հայկական լեռնաշխարհի էթնիկական կազմը համապատասխանում է հին բնակչության թողած նյութական մշակույթին: Առաջավոր Ասիայում և Հայկական լեռնաշխարհում արմենոիդ տիպի ծագումն ավելի վաղ է կատարվել, քան արիական ու սեմական ցեղերի ներխուժումը: Արմենոիդների տարածման սկզբնական ժամանակաշրջանը Առաջավոր Ասիայի տերիտորիայում նախորդել է հնդեվրոպական լեզուների տարածմանը: Այս բանը հաստատվում է նաև մեր պեղումների գտնված նոր քարե դարի և պղնձի դարի մարդաբանական նյութերով, ուր արմենոիդ առանձնահատկությունները երևան են գալիս լիովին պարզորոշ... Այս ժողովրդին՝ իր մարդաբանական տիպով, քաղաքակրթության և

<sup>1</sup> Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվանի արխիվ, թղթապանակ N70:

լեզվական մնացորդներով, կարող ենք հետևել անընդմեջ բոլոր դարերում՝ հասնելով մինչև մեր օրեր... Ժողովրդական այդ խավը, Հայկական լեռնաշխարհի նախասկզբնական հիմնական խավը լինելով, հազարավոր տարիների ընթացքում պահպանեց իր մարդաբանական, մշակութային առանձնահատկությունները, որն այսօր վերապրում է հայերի մեջ»<sup>1</sup>:

Այլազգի շատ գիտնականներ ուսումնասիրել են հայերենը, հմայվել նրա խորհրդավորությամբ և ջանացել խորամուխ լինել այդ առեղծվածային ադամական լեզվի յուրահատկությունների մեջ. «Սողոմոն Կեսար Մալանը Ջմյունիայում եղած ժամանակ սկսեց հայերեն սովորել, որովհետև շատ սիրեց և հիացավ այդ լեզվով և այլևս չուզեց ետ կանգնել դրա ուսանումից»<sup>2</sup>:

Ապացուցված է, որ հայերենը հնդեվրոպական ծագում ունի, այսինքն պատկանում է այն լեզվաընտանիքին, որ պայմանականորեն կոչվում է հնդեվրոպական: Հնդեվրոպական լեզուները հնում տարածված էին Հնդկաստանից մինչև Եվրոպա: Հնդեվրոպական լեզվաընտանիքը խիստ բազմաճյուղ է: Նրա մեջ մտնում են մեծ քանակությամբ կենդանի և մեռած լեզուներ, որոնց թիվը հասնում է մեկուկես տասնյակի՝

1. Հնդկական
2. թոխարական(մ.),
3. հայկական,
4. խեթալուվական(մ.),
5. սլավոնական,
6. բալթիական,
7. փոյուզական(մ.),
8. թրակյան(մ.),
9. հունական,
10. ալբանական,
11. իլիրական(մ.),
12. վենետական(մ.),
13. իտալյան,<sup>1</sup>
14. կելտական,
15. գերմանական:

Թոխարական, խեթալուվական, փոյուզական, թրակյան, իլիրական, վենետական ճյուղերը ներկայացված են միայն մեռած լեզուներով: Մյուս ճյուղերի լեզուները հիմնականում կենդանի են, թեև նրանց մեջ նույնպես կան մեռած լեզուներ, օրինակ, իրանական լեզուների մեջ՝ սկյութերենը, մարերենը, բալթիականի մեջ պրուսերենը, իտալյանի մեջ՝ օսկերենը, գերմանականի մեջ գոթերենը, վանդալերենը և այլն:

Նշենք, որ «մեռած լեզուներ» անվանումն օգտագործվում են նաև այն հին գրավոր լեզուների համար, որոնք փոփոխված ձևով պահպանվել են նաև մեր օրերում. այդպիսիք

<sup>1</sup> Ս. Ա. Սարդարյան, Հայաստանի նախնադարյան հասարակությունը, Եր., 1967:

<sup>2</sup> Ադոլֆ Գուտտավ, Ուսումնասիրություններ հայ լեզվի, 1895, Վենետիկ:

են հին հնդկերենը՝ սանսկրիտը, հին հայերենը՝ գրաբարը, հին հունարենը, իտալյան ճյուղի մեջ՝ լատիներենը, սլավոնականի մեջ՝ հին սլավոներենը և այլն:

Խոսքս ավարտում եմ հետևյալ ասույթներով.

«Որպես լեզվաբան՝ ես փորձել եմ թափանցել հայոց լեզվի գաղտնարանները, նրա հոգու խորքերը, պարզել եմ, թե ինչպիսի մասնավոր շնորհ ունի այդ լեզուն, որ կարողանում է այդքան գերազանցորեն արտահայտել գիտական, փիլիսոփայական ամենաճշգրիտ գաղափարները, ինչպես նաև բանաստեղծական ամենանրբին զգացումները: Հայոց լեզվի մեջ ես գտա այդ բոլոր գեղեցկությունները, սիրահարվեցի և իմ կյանքի ամեն մի վայրկյանը նվիրեցի այդ լեզվի ուսումնասիրությանը»: (Ֆրեդերիկ Ֆեյդի)

«Այդ լեզուն մայրենի» կոչելը մեծպատիվ է: Այդ լեզվով խոսելն ու մտածելը մեծ բախտ է: Գալով անհիշելի ժամանակներից, անցնելով բազում դարերի միջով, շփվելով բազմաթիվ ազգերի լեզուներին՝ հայոց լեզուն մի յուրահատուկ հանրագիտարան է անհիշելի ժամանակների, բազում դարերի և բազմաթիվ այլ ազգերի: Այսպես դատելով, մեր լեզուն միայն մեզ չի պատկանում, այլև ամբողջ աշխարհին, նա միայն մեր սրբությունը չէ, այլև մասունքը հանուր մարդկության: Այդ պատճառով էլ նա ուսումնասիրվում է ոչ միայն մեր պետական համալսարանում, այլև աշխարհի շատ համալսարաններում»:

(Պարույր Սևակ)

## ЗОЯ СТЕПАНЯН

### АРМЯНСКОЕ НАГОРЬЕ - КАК РОДИНА ИНДОЕВРОПЕЙСКОГО ЯЗЫКА

*Ключевые слова:* язык, родина, лингвисты, лингвистика, философия

*Несмотря на преобладающее мнение, что первоначальная родина индоевропейской культуры находится на территории нынешней Европы, значительное число ученых склонны считать, что индоевропейская родина находилась на Ближнем Востоке.*

*Основы гипотезы европейской родины индоевропейского языка - были подорваны, особенно когда исследования показали, что родиной индоевропейского языка являлась горная страна со всеми ее свойствами, что не в коей мере не вписывается в европейскую местность, которую пыталась представить как место возникновения этого языка.*

*Действительно, существование индоевропейского этноса и языка уходят своими корнями к тысячелетнему периоду.*

*А когда начался раскол? Некоторые ученые считают, что самый ранний период разделения был в VI-V тысячелетии до нашей эры, другие считают - в IV тысячелетии до нашей эры. Таким образом, происхождение армянского языка и армян восходит к VI-IV тысячелетиям до нашей эры, то есть 5-6 тысяч лет до нас.*

ZOYA STEPANYAN

## ARMENIAN HIGHLANDS AS THE HOMELAND OF THE INDO-EUROPEAN LANGUAGE

*Key words:* language, homeland, linguists, linguistics, philosophy

*Though there is a predominating opinion that the original homeland of the Indo-European people was in Europe, most scientists have occasionally referred to the Advanced Asia as their original homeland.*

*The basis of the European version of the original homeland of the Indo-European language collapsed when the studies showed that the original settlement of the bearers of the Indo-European language was a mountainous country. This doesn't correspond to the European territory that scientists tried to introduce as the homeland of the language.*

*In fact, the epoch of the existence of the Indo-European original population goes back to the ancient times.*

*And when did the disconnection start? Some of the scientists think that the earliest separation must have begun since VI-V millenniums BC, others think in the IV millennium. Thus the origin of the Armenian language and the Armenians goes back to VI-IV millenniums.*

### ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՊՈՅԱՆ

*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ*

### ՆԱՆԱ ՊԱՊՈՅԱՆ

*Ասիստենտ, ՀԱԱՀ*

## ԼՈԳՈՍՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

*Հիմնաբառեր.* մատակարարման-արտադրական-բաշխման համակարգեր, լոգիստիկական համակարգ, գործառնությունների և նյութական հոսքերի կառավարում, լոգիստիկական ստորաբաժանումներ, տեղեկատվական լոգիստիկա, բաշխման լոգիստիկա, շուկայի իրավիճակ, լոգիստիկական համակարգի օղակ, ուղղակի կապեր, պաշարների կառավարում:

*Հոդվածում նշվում է մատակարարման-արտադրական-բաշխման համակարգերի ինտեգրման անհրաժեշտության և այդ խնդրի լուծման գործում լոգիստիկ մոտեցման դերի ու նշանակության մասին: Վերջինիս արդյունավետ գործունեության ուղղություններ:*